

ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՔԸ

(ԹԵՈՒԱՌՈՒԹԵԱՆ ՈՒ ՈՂՔԻ ԵՐԳԻՆԸ)

Ա.

Հայ գրականութիւնը, Գրականութեան ու կեանքի կապը, ուսումնասիրութեան համեմատական տեսակէտը, Ա.-ի բռնած տեղը հայոց գրականութեան սահմաններում, Ա.-ի կենսագրութիւնը—ծնունդ, մանկութիւն, Ծնողների տնտեսական վիճակն ու Ա.-ի դաստիարակութիւնը, ուսուցչական գործունէութիւնը, ժամանակի քաղաքական կեանքն ու տաճկահայ գաղթականութիւնը, Ա.-ի տպաւորութիւններն ու գրական առաջին փորձերը («Պուտ մը կաթ», «Փշուր մը խաց» ևայլն), Արտասահման անցնելը և յետագայ գրական ստեղծագործութիւնները, Ա.-ն որպէս թշուառութեան երգիչ:

Հայ գեղարուեստական գրականութիւնը, որպէս մի փոքրիկ ազգի հոգեկան կեանքի արտադրութիւն՝ նեղ է ու սահմանափակ, աղքատ է ու մակերեսային այնպէս՝ ինչպէս հայի մտաւոր յառաջագիմութիւնը, սօցիալական ամբողջ կեանքը և հոգին:

Կեանք և Գրականութիւն—սրանք շաղկապուած երեւոյթներ են և մէկը առանց միւսի բարդաւաճել ու զարգանալ չի կարող: Գրականութիւնը այն մեծ հայելին է, որի մէջ կեանքը արտացոլում է իր բիւրաւոր երեւոյթները, որտեղ մարդկութիւնը կարդում է իր հոգու հանգոյցների լուծումները և դիտում գեղագէտի մի պուրակ ճառագայթների ցոլքերով լուսաւորուած ենթակայական ու առարկայական աշխարհների մութ, անհասկանալի անկիւնները:

Գրականութիւնը ծնւում է ժողովուրդների կեանքից ու նրա մէջ էլ սնւում ու զարգանում: Որքան մի ժողովրդի կեանքը բարդ է, յառաջադրած պայմանները հարուստ, հոգու հորիզոնը լայն, միտքը ընդգրկող, պա-

Հանջները բարձր ու բազմատարր, այնքան էլ նրա գրական ստեղծագործութիւնները կը լինին ուժեղ, զեղեցիկ, բազմատեսակ ու խորը:

Մեր փոքրիկ կեանքի պահանջների հանդէպ՝ մեր ստեղծագործութիւններն էլ փոքր են, աննշան՝ մեծ ազգերի ունեցածի համեմատութեամբ: Սակայն ուշադրութեան արժանի մեզ համար: Այստեղից պարզ հետեւում է այն, որ մի ազգի այս կամ այն հեղինակի ստեղծագործութիւնները վերլուծելիս, քննադատելիս՝ որպէս ճիշտ չափ պիտի ընդունենք կեանքի ու գրականութեան մէջ եղած վերոյիշեալ կապը: որով և հնարաւորութիւն կունենաք զեղարւեստական երկի կամ հեղինակի ճիշտ տեղը մատնանշել նոյն այդ ազգի գրականութեան սահմաններում:

Աւետիս Ահարոնեանն այս տեսակէտից մեր գրականութեան մէջ ունի իր բաւական ինքնուրոյն ու որոշ տեղը: Նա իր նախորդների՝ Արովեանի, Պօռեանի ու Բաթթու պակասաւոր կողմերն իւրացրեց ընդհանրապէս: Նրանց, առանձնապէս առաջին երկուսի ընդգծած ռեալիստական ուղղութիւնը իր ռոմանտիկ հոգու և ենթագոյական բնոյթի պատճառով անկարող եղաւ ընդգրկել ու այնուհետեւ շարունակեց մնալ իր թէ պատմածքների, թէ վէպերի և թէ դրամաների մէջ նոյն Ահարոնեանը:

Նրա գրական բոլոր ստեղծագործութիւնները կրում են իր խառնուածքի խոր ազգեցութիւնը: Նա չի կարողանում իւր ես-ը ձուլել, տարրալուծել ստեղծագործութեան մէջ այնպէս՝ որ երկուութիւն չնկատուի: Ընդհակառակը՝ ամեն տեղ Ահարոնեանի ցուցադրած ապրումները, դադափարներն ու գործերը տիպերին, գործող անձանց անհաղորդ են մնում, հեղինակի եսը ցուցադրում: Այս պատճառով Ահարոնեանի երկերը հասկանալու, շօշափած խնդիրները բացատրելու, իշխող տոնը պարզ կացուցանելու համար՝ պիտի կարելիին չափ լուսաբանենք նրա ներքին աշխարհը, ստեղծագործական այդ ուղիով գնալու պատճառներն և այնուհետեւ փորձենք պարզել, զնահատել ստեղծագործած երկերի արժէքը:

Ահարոնեանը ծնուել է 1866 թուին, Երևանի նահանգի Իգդիր-Մաւա գիւղում: Ծնողները շատ աղքատ հաղիւ հայթհայթել են իրենց տան օրական պարէնը. առանձին ուշադրութիւն չեն դարձրել իրենց որդու կրթութեան և դաստիարակութեան վրայ, նոյնիսկ գիւղի ծխական դպրոցից հանել են, որպէսզի միրգ ծախելով իրենց օգնութեան հասնի: Հայրը բնաւորութեամբ մեղմ, չափազանց բարի և յաճախակի զգացող, մայրը հօր հակապատկերն է եղել, գիւղական աշխատանքներ կատարելու մէջ իր ամուսնու աջ կուռը, իսկ տնային գործեր կատարելու մէջ միանգամայն անշնորհք: Ահարոնեանը դպրոցը թողնելուց մի տարի յետոյ Դ. Քալանթարեանի միջոցով նորից մտնում է գիւղի ծխական ուսումնարանը և շարունակում ուսումը:

Մենք չգիտենք թէ ծխական դպրոցը ի՞նչ ազդեցութիւն ունեցաւ Աւետի հոգու, բնաւորութեան, խառնուածքի վրայ, միայն այսքանը յայտնի է, որ նա իրեն՝ ընկերների շրջանում, քաշուած է պահել, չի մասնակցել նրանց մանկական խաղերին ու զուարճութիւններին, ինչպէս ինքն է գրում, այն պատճառով, որ ընկերներից ոչ ոք չի ըմբռնել նրա հոգու պահանջները. «նա փնտռում էր ընկերներին անհասկանալի շեշտեր, մանուկ հասակի խաղերն ինձ միշտ խորթ մնացին» *):

Փոքրիկ Աւետիսը դեռ շատ վաղ՝ 8—9 տարեկան հասակում ճաշակեց կեանքի դառնութիւնները, երբ նրան ծնողները գուրս հանեցին դպրոցից, նա մի ամբողջ տարի իրենց գիւղի բազարում միրգ ծախելով էր անցնում իբրեւրը: Բայց դրա հետ երբէք մոռացութեան չէր տալիս դպրոց մտնելու միտքը: Ինքը զգայուն, չափազանց ուսումնաստենչ ու աշխատասէր երեխայ, յաճախ լացով դիմում էր ծնողներին, որ թոյլ տան ուսումը շարունակի:

Ընտանիքի ազդեցութիւնն ակնյայտնի է փոքրիկ Աւետիսի բնաւորութեան վրայ. նրա ծնողները գաղթել

*) Արշարունի վ.ին գրած նամակից:

էին Սալմաստից և իրենց հետ բերել տաճկաց ու պարսկաց բռնութիւնների, կոտորածների ու զուլումի վառ յիշողութիւնները և յաճախ պատմել տանը՝ տեսած իրողութեանց ցնցող մանրամասնութիւնները: Մի կողմից այս, միւս կողմից հօր բնաւորութեան խորը ազդեցութիւնը տալիս են Աւետիսի հոգուն ու բանաստեղծական շնորհքին թախծոտ լացող ու մեղմ շեշտեր: Այս ազդեցութիւնը շատ գեղեցիկ կերպով ինքը յայտնաբերել է իր մի նամակում. «Հայր, դեռ օրօրոցում մայրս ինձ ցաւի օրօրներ տեսաց. ապա իմ այն հասակում՝ երբ մանուկները կայտառ են՝ ինչպէս վաղորդեան թիթեռնիկ և տնհոդ՝ որպէս թռչնիկ, երբ կեանքը խինդ, ցաւը՝ երազ է թւում, այդ ցաւի օրօրները հնչում էին ականջիս և նրանց բռներից ցաւն ու զուլումը, դարդն ու արցունքը դեռ այն ժամանակուանից մեղմիւ հիւսեցին իմ սրտում հազար քնքոյշ թելերով, հազար ցանցերով իրենց բոյնը: Այն ինչ զուլում էր, ինչ դարդ՝ ես չէի հասկանում»^{*)}։

Ծխական դպրոցը վերջացնելուց յետոյ՝ 1881 թուին Աւետիսը մտնում է Գեորգեան Հոգևոր Ճեմարանը և 1885 թուին յաջողութեամբ աւարտում դասարանական բաժինը. ցանկութիւն է յայտնում մտնել Ճեմարանի մասնագիտական բաժինը՝ լսարան, բայց դժբախտութիւնը վրայ է հասնում: Այդ թուին մահանում է հայրը՝ Թողնելով ընտանիքն անպաշտպան ու նիւթական նեղ պայմանների մէջ: Աւետիսը ստիպւած է լինում թողնել Ճեմարանը և ուսուցչութեամբ հայթ հայթել մօր ու երեխաների ապրուստը:

Ճակատադրօրէն կարծես հանդամանքներն այնպէս դասաւորուեցին, որ Ահարոնեանը թշուառութիւնից դատուրիշ բան չտեսաւ ու սովորեց: Մանկութիւնը թշուառ ընտանիքը նեղ պայմանների մէջ, ականջների տակ շարունակ կոտորածների ու բռնութեանց հեծեծանքների ինքը ծանրաբեռնուած ապրուստի հոգսերով անձնատուր է լի-

*) Արշարունի վ-ին ուղղած նամակից:

նուժ իր սեպհական խոհերին և այնտեղ աշխատում
գտնել իր սփոփանքը: Ներքին խոհերը բաւարարութիւն
չեն տալիս նրան և ուսուցչական շրջանում նա դառնում
է բնութեան սիրահար: Ահա թէ ինչ է գրում ինքն՝ իր
այդ շրջանի մասին. «Եւ ապրում էի բնութեան խաղե-
րով: Ոռնացող քամու աղաղակների, ամպերի որոտում,
շանթերի զզրոցի մէջ, ես փնտռում էի իմ հոգու մխի-
թարութիւնը: Իսկ ջրերի մեղմ կարկաչիւնը, ծառերի
տխուր սօսափիւնը, խաւար զիշերուայ մէջ հնչող ան-
հասկանալի ձայներն ինձ համար խորունկ հեծեծանքներ
եղան միշտ. նրանք կանչում էին ինձ, քաշում էին, ես
վազում էի դէպի ամայութիւն, վազում էի դէպի տիե-
զերքի անհունութիւնը: այնտեղ էի փնտռում այն, ինչ
սիրելի էր սրտիս: ինչ գրաւում էր ինձ»^{*)};

Ահարոնեանը ձեմարանում և այնուհետեւ կեանքում
այնքան էր յառաջագիմել ինքնաշխատութեամբ, որ նրա
հոգին տիեզերքի անհունութեամբ էր զբաղւում, այն իւր
յոյզերի, խոհերի առարկայ դարձնում:

Ինքնախորասուզման այս երկարատեւ շրջանում հօ-
րից ժառանգած զգայականութիւնը չափազանց զարգա-
նում է Ահարոնեանի մէջ, և կեանքի փոքրիկ անյաջո-
ղութիւնը, մի անարդար դէպքը յաճախ յուզում, վրե-
դովում էր նրան յուսահատութեան չափ:

Զարմանալին այս բոլորի մէջ այն է, որ Ահարոնեանի
տաղանդը 90—93 թուականը ստեղծագործելու պահանջ
չի ունեցել ու չի ստեղծագործել, կատարուած ցաւալի
իրողութիւնները կարծես բաւական չէին նրա բանաստեղ-
ծական շնորհքը յուզելու, ստեղծագործող վրձինը շար-
ժելու: Հարկաւոր էր էլ աւելի հրդեհող մրրիկ, էլ աւելի
այրող ու տոչորող կրակ՝ բանաստեղծին գործի կանչելու.
և եկաւ մրրիկը: 94—96 թուականներին սկսուեցին ու
ծաւալուեցին Համիդեան զազանային կոտորածները: Ահա-
ւոր սոսկումը ցնցեց ամբողջ հայ ազգաբնակչութեան:

*) Արշարունի վ.ին գրած նամակից:

էրզրում, Վան, Ալաշկերտ, Սասուն, Մուշ մի սոսկալի ջարդ սկսուեց. ցնցուեցին հերոսական պետութիւնները. Հայ և մասամբ օտար մամուլը զբաղման լուրջ խնդիր դարձրեց այդ գազանութիւնը: Հարիւրաւոր ընտանիքներ, հազարաւոր անտուն, անտէր թշուառներ թողին իրենց ծննդավայրն ու փախան Ռուսաստան իրենց կեանքը ազատելու: Իգդիրը, որպէս սահմանադիւի աւան, լցուեց փախստականների խմբերով: Մահուան սարսափն ու զոհութիւնները հարեկիչ ազգեցութիւնը մի կողմից, հարազատների կորստեան կսկիծն ու զոյքերի ոչնչացումն միւս՝ փախստականներին տուել էին արգահատելի տեսք:

Տառապեալներին խնամելու համար յանձնախումբ կազմուեց Իգդիրում, որի անդամներից մէկն էլ Ահարոնեանն էր: Նա այս անգամ անձամբ առիթ ունեցաւ տեսնելու, դիտելու և ուսումնասիրելու զաղթական թշուառների կեանքը: Խո՛րը, շատ խո՛րը ցնցեցին Ահարոնեանի սիրտը թշուառութիւններից ու անզօր զարոյթից առաջ եկած ողբն ու հառաչը, լացն ու հեծեծանքը. և նա զգայուն զրչի ուժով, ապրած տպաւորութիւնների ազգեցութեամբ վերարտադրել սկսեց իր տեսածը:

Գրական առաջին ստեղծագործութիւնները — «Պուտ մը կաթ», «Փշուր մը խաց» և «Ֆալագ վուրդունի», լոյս տեսան 96 թուին Մշակում: Բոլորի նիւթերն էլ վերցրած է գաղթականների կեանքից: Ծնշող հազարթեանի վիշտն է խօսում այդ պատմութեանքների մէջ. մի տեղ կիսաւեր մաւրազ, որի մզլած ու խոնաւ յարդի վրայ իրենց ցնցոտիներով պատսպարուել էին մարդը, կինը իրենց մահամերձ որդու հետ: Մարդը հիւանդի խնդրած «Պուտ մը կաթը» ճարելու է դնում, մի քիչ յետոյ վերադառնում է՝ խեցիի մէջ հեղուկը ձեռքին և որդուն մեռած է գտնում: Մի ուրիշ տեղ՝ երկու ոտաբորիկ, կիսամերկ որբեր ձմեռուայ սառնամանիքների միջով քայլում, ապրելու հաց են մուրում: Շունը յարձակում է պատառոտում փոքրերից մէկի ոտը, մուրած հացն էլ արիւնոտում է նրանց ձեռքերի մէջ, բայց և այնպէս ուտում են արնոտ

հացը՝ քաղցը յագեցնելու, երրորդի մէջ գաղթական ճանապարհորդներ՝ վիրաւոր մարդը կնոջ և երեխաների հետ, քայլում է Բարդողեան լեռնաշղթայի ձեան հաստ շերտի միջով. երեքն էլ յոգնած են, ուժասպառ. փչում է փոթորիկը, ճանապարհորդները յուսակտուր դիմում են դէպի մի այր՝ պատսպարուելու. փոթորիկը շարունակում է ոռնալ. վիրաւոր մարդը հետզհետէ արիւնաքամ է լինում ու սառչում իր երեխայի հետ. իսկ կինը այդ պատճառով խելագարւում, թողնում է այրը և հասնում՝

Ի գիւղը:

Երեք պատմուածքներն էլ պարզ, հասարակ, լոկ իրականութեան հարազատ պատկերներ են, որոնց մէջ գերակշռող տոնը ողբն է: Զուենն գեղարուեստական արժէք. լուծումները պատահական. գործող անձինք չուսումնասիրուած հոգեբանօրէն, հանգոյցների, կենդրոնական հարցերի կատարեալ բացակայութիւն: Բայց այս բոլոր պակասութիւնների հետ պատմուածքները ցուցադրում են Ահարոնեանի պատմելու, նկարագրելու անժխտելի շնորհքը, մասնանշում այն, որ երիտասարդ հեղինակը փորձում է ապրել ու զրուսեորել գործող անձերի հոգեբանութիւնը (Պուտմը կաթ—հօր ողբը. Ֆալագ վուրդ. կնոջ երեակայութիւնն ու խելագարութիւնը), ջանում՝ վերարտադրել, պատկերել նրանց հոգու փոթորիկները:

Այս երկու հանգամանքները բաւարար զրաւական էին արդէն կարծելու, որ Ահարոնեանի հոգին ստեղծագործական բնատուր շնորհքն ու ձիրքն ունի: Գնահատեցին, հետաքրքրութիւն ցոյց տուին դէպի Ահարոնեանը, աւելի՛ քան հարկաւորն էր, որովհետեւ սկսնակ գրողը շօշափել էր այժմէութիւն ունեցող խնդիրներ:

Այնուհետեւ իրար յետևից լոյս տեսան՝ նորածինը, Բաշօն, Բախտի խաղեր, Զնդանում, Արիւնոտ թթխմոր. բոլորն էլ տաճկահայ գաղթականների կեանքից, առաջին պատմուածքներից շատ քիչ բանով տարբերւող, նոյն անփորձ զրջի արդիւնքներ:

98 Թուականին Ահարոնեանի բարեկամները հարա-

ւորութիւն տուին նրան արտասահման գնալ՝ ուսումը շարունակելու: Ուսանողական կեանքը ոչինչ չփոխեց, այլ նրա ունեցածը բեղմնաւոր ու արդիւնաւէտ դարձրեց: Տեսանք, որ նա փոքր հասակից փնտռում էր իր ընկերներին անհասկանալի շեշտեր, բնութեան, տարերքի ամեն մի խաղը խօսում էր նրա հոգու հետ: Նրա հոգին, բոմանտիկ բնաւորութիւնն այդ բոլորի մէջ փնտռում էր ինչ որ անհասկանալի ու խորհրդաւոր բան: Այս խառնուածքի տէր հեղինակը բնական է, որ իր ուշադրութիւնը կենդրոնացնէր բոմանտիկ գրական ստեղծագործութիւնների վրայ. և, իրօք, այն հանգամանքը, որ նրա երկերի ստուար մասի մէջ ակնբախ է բոմանտիկ հեղինակների ազդեցութիւնը, ինքնին արդարացնում է վերոյիշեալ եզրակացութիւնը: Այդ աշխատանքի հետ Ահարոնեանը շարունակեց իր սեպհական ստեղծագործութիւնը: Այս երկտարր աշխատանքը մի կողմից մարզեց նրա ստեղծագործելու չափը, միւս կողմից բարձրացրեց, նրբացրեց նրա գեղարուեստական ճաշակն ու արտադրելու տեխնիկան: Պատմուածքների մեծ մասը նա գրել է ուսանող ժամանակ (Ազատութեան ճանապարհին, Ժողովածուների I և II հատորները, Արազը և այլն):

Արտասահմանից երբ վերադարձաւ, նրա տաղանդը սկսեց մեծ ստեղծագործութիւնների շրջանը (Մրրկի Սուրբը, Լուութիւն, Արցունքի հովիտ, Ուխտուածներ, Սև թռչուն, Անդունդ, Մոխիրների տակից, Խաւարի մէջ): Թէ արտասահմանում և թէ յետադայ ստեղծագործած երկերում, շատ քիչ բացառութեամբ, Ահարոնեանը նկարագրեց, ողբաց ու երգեց տաճկահայ կեանքը, կոտորածն ու նրա հետեւանք՝ գաղթականութեան լացն ու հառաչը: Վերոյիշեալ բոլոր գրական արտադրութիւնները որոշեցին հեղինակի գրական դէմքը՝ նա դարձաւ թշուառութեան ու ողբի երգիչ:

Ե. Հայրապետեան

(Շարունակելի)